

ԵՐԲ ԵՎ ՈՐՏԵՂԻՅ ԵՆ ՀԱՅԵՐԸ ԳԱՂԹԵՒ ԶԵՐՔԵԶԻԱ

Ե. Ա. ՓՈՐՔՇԵՅԱՆ (Նալչիկ)

Չերքեզահայերի պատմությունը հայ պատմագիտության կողմից բոլորովին աչքաթող է արված: Մինչև այսօր այդ հարցը արժարժող մի որևէ ուսումնասիրություն չի հրատարակված: Իրենք Չերքեզահայերը լսել են նախնիներից, որ իրենց պապերը եկել են Հայաստանից շատ և շատ առաջ, բայց երբ և որտեղից, չգիտեն: Մենք ևս մինչև այսօր չգիտենք զաղթականության սկզբնավորումը՝ ովքե՞ր են եղել այդ հայերը, ե՞րբ և որտեղի՞ց են գաղթել, ի՞նչ գեր են խաղացել իրենք նոր հայրենիքում, նրա քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքում: Այս ամենը մնում է անհայտության թանձր բողի տակ: Ներկա համառոտ ակնարկի համեստ նպատակն է, այդ աչքաթող եղած հարցերից առայժմ պարզել միայն երկուսը՝ ե՞րբ և որտեղի՞ց են գաղթել Չերքեզահայերը:

Մեզ հայտնի է միմիայն 'Ազարյան քահանայի' Չերքեզահայերի գրությունը նվիրված հոգվածը, որը տպագրված է «Կովկաս» պարբերականի 1846 թվականի № 40-ում: Ղազարյանը, որպես հոգևոր հովիվ, այցելել է Չերքեզիայի հայաբնակ վայրերը և նկարագրել իր ճանապարհորդական տպավորությունները, հայերի անմիթիվար վիճակը լեռներում. նա տալիս է գլխավորապես ազգագրական տեղեկություններ Չերքեզահայերի ու Չերքեզների մասին: Անցյալին վերաբերող պատմական տեղեկություններ այդ հոգվածը իր մեջ չի պարունակում:

Անցյալ դարի քառասնական թվականներին Բարոն Ստալը, որ երկար ժամանակ ծառայել է ռուսաց բանակում որպես բարձրաստիճանի զինվորական և կռվել է անհնազանդ Չերքեզ ցեղերի դեմ, Չերքեզների մասին գրել է մի շատ լրվանդակալից և րնդարձակ ուսումնասիրություն: Այդ աշխատանքի մեջ Ստալը մոտ մի էջ նվիրում է Չերքեզահայերին: Նրա տեղեկությունների համաձայն հայերը Չերքեզիայում ունեցել են 520 ծովա, մոտ 5000 հոգի, գրադվել են առևտրով, որ վերին աստիճանի վտանգավոր գործ է եղել: Հայ վաճառականները լեռներում միշտ հարձակման ու կողոպուտման են ենթարկվել, մանավանդ արածեղների կողմից և հաճախ տուն են վերադարձել կողոպուտված, մերկ ու արյունաթաթախ: Չնայած դրան, շարունակում է Ստալը, առևտրի արդյունքը այնքան մեծ է եղել, որ նույն առևտրականը, դեռևս ծեծից ու կողոպուտից ուշքի չեկած, նորից արդյունաբերական ապրանքներով ծանրաբեռնված ուղևորվում է լեռները՝ իր կրած վնասը շտկելու համար: Ստալի ասելով, հայերը ունեցել են շատ ստրուկներ, որոնց ձեռք են բերել առհասարակ արդյունաբերական ապրանքների հետ փոխելով և որոնք հաճախ փախել են նրանցից՝ գնալ սարերի խորքերը¹:

Ստալը նկարագրում է այն, ինչ որ անձամբ տեսել է իր ժամանակին: Անցյալին վերաբերող պատմական տեղեկություններ և մասնավորապես հայերի՝ երբ և որտեղից եկած լինելու մասին նրա հոգվածում ոչինչ չկա:

Առաջին անգամ ռուս պարբերական մամուլում Չերքեզահայերի մասին րնդարձակ հոգվածներով հանդես եկավ Ի. Իվանովը²:

Ըստ արմավիրցիների այդ Իվանովը եղել է զինվորական ցածրաստիճանի սպա, ժառանկցել է Չերքեզների դեմ մղված կռիվներին, բայց բոլորովին անտեղյակ է եղել Չերքեզահայերի անցյալին:

¹ Карл Теодорович Сталь, Этнографический очерк черкесского народа, Кавказский сборник, т. XXI, Тифлис, 1900, էջ 109:

² И. Иванов, Армавир, «Кавказ», 1850, № 45, Армавирские армяне, «Ставропольские губернские ведомости за 1855 г.», էջ 21—26, 33—39, 128—130, 143 և հուր: О кавказских горских армянах, Известия Кавказского отдела Императорского русского географического общества.

Իվանովը իր հողավածներում շոշափում է շատ բարդ սոցիալական հարցեր, որոնք խիստ վիճելի են թվում, բայց առայժմ այս ակնարկում մեզ հետաքրքրող հարցին՝ երբ և որտեղից են գաղթել հայերը Չերքեզիա, նա տալիս է վճռական սլատասխան: Ըստ նրա հայերը Չերքեզիա են եկել Ղրիմից, մոտ 200 տարի առաջ:

Աչքի առաջ ունենալով, որ Իվանովը գրել է 1855 թ., նշանակում է գաղթը տեղի է ունեցել մոտավորապես 1655 թ.: Լեոն համամիտ է Իվանովին այն հարցում, որ գաղթականությունը եկել է Ղրիմի կողմերից՝ ժամանակի մասին նա չի խոսում, բայց չի էլ մերժում Իվանովի կարծիքը:

Իվանովի այս կարծիքին անկարելի է համաձայնել: Ինչպես շուտով կտեսնենք, փաստերը ուրիշ բան են հաստատում:

Չերքեզահայերի մասին անվիճելի տեղեկություններ ունենք 1780 թվականից, երբ հիմնվել է Կոնստանդնուպոլսի Չերքեզական ընկերությունը, որը հիմնվել է Կոնստանդնուպոլսի Չերքեզական ընկերության կողմից: Ըստ Իվանովի՝ հայերը Ղրիմից Չերքեզիա են եկել 1655 թ. նշանակում է, մինչև 1780 թ. նրանք չերքեզների մեջ ապրել են ընդամենը՝ 125 տարի: Անկարելի է, որ այդքան կարճ ժամանակամիջոցում հայերը այն աստիճան են թափանցել կուլտուրական իրենցից ցածր կանգնած չերքեզների ազդեցությանը, որ մինչև իսկ մոռանալին իրենց մայրենի լեզուն: Դրա համար հարկավոր էին երկար ու ձիգ դարեր, ինչպես ցույց է տալիս պատմական փորձը: Ղրիմի հայերը թյուրքերի դարձնակ պահել է իր լեզուն, Բուլղարիայում և Ռումինիայում ևս հայերը դարձրել պահել են իրենց ազգային առանձնահատկությունները, իսկ Սուլթանի մինչև իսկ իրենց ազգային տարազով հագնվելու սովորությունը: Չերքեզահայերը անշուշտ 1655 թվականից շատ և շատ առաջ են եկել չերքեզների երկիրը:

Չերքեզահայերի մասին առավել ուշագրավ աշխատություն է արժավիրյինների պատմերով Ռուսական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Յ. Ա. Շչերբինայի գրած գիրքը²: Դիրքն ունի խոշոր արժանիքներ. նա լրիվ լուսաբանում է Արմավիրի հիմնադրման, Արմավիրյան կոնկուսի նվաճման և այլ գործում հայերի մասնակցության պատմությունը, ճշտորեն նկարագրում է Արմավիրի տնտեսական զարգացման բուռն աճը, Ռուսական կուլտուրայի մուտքը, էքսպլանդացիայի և հրապարակ իջնելը և նրա կոնկրետ առիթների հետամնաց սուլտանությունների դեմ: Շչերբինայն գրել է Արմավիրի պատմությունը իր տեսածի և բազմաթիվ տեղերից մոտավոր անցյալի մասին լսածի հիման վրա:

Սակայն չերքեզահայերի խոր անցյալը, գաղթի ակզբնավորումը մնում է մթություն մեջ այդ հարցերին վերջնական և համոզիչ պատասխան հարգելի գիտնականը չի տալիս: Միայն առաջաբանի 2-րդ էջում նա գրում է, որ հայերը չերքեզների մեջ ապրել են 300 տարուց ավելի. իսկ գրքի վերջում ասում է, որ գաղթը մայր հայրենիքից տեղի է ունեցել XIV դարի վերջին. այսինքն ավելի քան 500 տարի առաջ: Որն է ճիշտը, դժվար է որոշել:

Ուրիշ լուրջ ուսումնասիրություններ չերքեզահայերի մասին մենք չգիտենք:

Երբ պատմական խնդիրների լուծման համար ստեղծվում է անել գրություն, երբ առաջարկված հարցի պատասխանը անկարելի է գտնել «գրավոր» աղբյուրների և կամ նյութաձև մշակույթից մնացած հուշարձանների համար վկայությունների մեջ, մնում է գիմել ժողովրդի հիշողության մեջ պահպանված ավանդներին:

Անցյալ դարի վերջերից սկսած մենք շատ ենք շփվել արմավիրյանների հետ և շատ ու շատ ծերունիների հետ առիթ ենք ունեցել գրուցելու նրանց անցյալի մասին:

Նրանք ամենքը կարծես նախօրոք պայմանավորված իրար հետ, միևնույն բանն էին պատմում: Միանգամայն մերժում էին Իվանովի կարծիքը թե՛ գաղթի Ղրիմից լինելու, և թե՛ 200 տարվա վաղեմիության մասին: Նրանք չէին ժխտում, որ իրենց մեջ կան ընտանիքներ, որոնց նախնիքը Ղրիմից են եկել, առանձնապես մատնանիշ էին անում Շահումյանների և Պարոնյանների ընտանիքները: Նրանց ասելով հիմնական գաղթը եղել է Հայաստանից, Անիից՝ անմիջապես նրա անկումից հետո, նրանք ամենքը իրենց համարում են անեցիների հետնորդներ:

Մինչև այսօր ամեն մի արմավիրցի մեծ հաճությամբ ու հպարտությամբ, կատարյալ նույնությամբ, միևնույն խոսքերով և մինչև իսկ միևնույն առաջանություններով կպատմի ձեզ սերնդեսերունդ, բերն-բերան անցած, սրբություններ պահված մի ավանդ, ըստ որի նրանց նախահայ-

¹ Լեոն, Հովսեփ կաթողիկոս Արղունյան, Թիֆլիս, 1902, էջ 207:

Փ. Ա. Шербина, История Армавира и черкесо-гаев, Екатеринодар, 1916.

րերը շերտերի երկիրն են եկել շատ և շատ դարեր առաջ, ուղղակի Հայաստանից, նրա անկումից հետո: Չերքեզների երկիրը նրանք մտել են Խոններից մինչև Ղուխները զինված, ամբողջովին երկաթապատ և զրահավորված, վերնագլխատի տակից երկաթաթել շապիկ հագած, գլխին դրած պողպատյա սաղավարտ, իսկ ձեռներին բռնած երկար կոթերով սուր կացիներ: Այդ զրահավորումը մեծ ապավորություն է թողել ու ազդել շերքեզ իշխանների և նրանց զորախմբերում մասնակցող ուզգենների վրա: Դրա համար նրանք մեծ պատվով ընդունել են հայերին որպես իրենց հավասար քաջերի, մտցրել իրենց զորամասերի մեջ և արտոնել նրանց իրենց զինվորականներին հավասար իրավունքներով, դասել իրենց տառաչին աստիճանի ուզգենների (ազնվականների) շարքը: Հայերը արդարացրել են շերքեզների ջերմ ընդունելությունը, քաջությամբ ծառայել իշխանների զորագնդերում և զարգացրել առևտուրը իրենց բնակության նոր վայրում:

Ահա այս է մնացել մինչև այսօր ժողովրդի հիշողության մեջ, որը անշուշտ, եթե ոչ ամբողջովին, գոնե մասամբ ճշմարտության սողմեր է պարունակում իր մեջ:

Անցյալ դարի ռուսաց բանակի գնդապետ արմավիրցի Գառպար Հարությունյանը, որը երկար ժամանակ եղել է Արմավիրի համայնքի պետը (старшина), լավ տեղյակ լինելով ֆոլկլորին և որոշ չափով իրենց պատմությանը, պնդում էր, որ շերքեզահայերը Չերքեզիա են եկել XI դարի առաջին տարիներին, բյուզանդական Բարսեղ II կայսեր օրոք: Գաղթականները եկել են մաս-մաս առաջին խումբը եղել է զորամաս, իր ժամանակի համար շատ լավ զինավառությամբ: Այդ զորամասը, իր զինվորների ընտանիքներով, կայսեր հրամանով պարտավոր է եղել գնալ Բալկաններ և բնակություն հաստատելով այնտեղ, պաշտպանել Բյուզանդիայի սահմանները բուլղարական հարձակումներից: Սակայն այդ զորախումբը զայրացած հայերի նկատմամբ հունական բաղադրականությունից, չի հնազանդել կայսեր հրամանին, փոխել է իր ճամփան և եկել է Քաման, շերքեզների երկիրը: Վերջիններիս մոտ գտնելով պատվավոր ընդունելություն, հայ զինվորները մտել են նրանց զորամասերը և ծառայել այնտեղ: Հաստատվելով այստեղ նրանք հրավիրել են նոր գաղթականներ, Եկողները ամենբը եղել են Անիից և Շիրակից: Վերջում գաղթականներ են եկել Պարսկաստանի կողմերից, որոնք շատ սակավաթիվ են և որոնց անցքի անվանել են «աճեմներ»: Արմավիրցի Աճեմյանները այդ «աճեմների» սերունդն են:

Որքանով են համապատասխանում ճշմարտության այս ծերունու պատմածները, դժվար է ասել, բայց նրանց մեջ կա ճշմարտության կորիզ: Ինչպես արմավիրցիների, այնպես էլ Հարությունյանի պատմածը ավանդություն է և որպես այդպիսին անկարելի է ընդունել որպես պատմական ճշմարտություն: Այդպես վարվելու համար անհրաժեշտ է որոնել այն վավերացնող անփիճելի ապացույցներ: Այդպիսի փաստեր առայժմ բիշ են, բայց կան: Դիմենք այդ փաստերին:

ԿԱՍՈՒՆԵՐԸ ԿԱՄ ԿՈՍՈՆԵՐԸ ԵՎ ԿԱՍՈՒԱՅԻ ՀԱՅՆԵՐԸ

Չնայած նրան, որ շերքեզները (աղիզները) Հյուսիսային Կովկասի ամենահին բնակիչներն են և իրենց թվով ու արգավանդ երկրի մեծությամբ միշտ առաջին տեղն են բռնել մյուս կովկասյան ազգերի մեջ, նրանք երբեք մի ազգ և մի պետություն չեն կազմել, երբեք ընդհանուր սկիզբից ապարատ, կառավարչական մարմին, օրենսդրություն, զորք, ֆինանսական սխեմա, սկիզբից զրամ, ներքին և արտաքին ընդհանուր քաղաքականություն չեն ունեցել, որի պատճառով միշտ տուժել են:

Երկիրը միշտ բաժանված է եղել ցեղային զանազան խմբավորումների և նրանց գլխավորող իշխանների, ֆեոդալների մեջ, որոնք միշտ գտնվել են օտարների՝ գլխավորապես Ղրիմի իշխանների հպատակության կամ ազդեցության տակ:

Ցեղական բաժանումների մեջ եղել են գլխավորող ուժեղ ցեղեր, որոնց անունն է կրել որոշ շրջաններում և ամբողջ ժողովուրդը: Ըստ ցեղական գերիշխանության աղիզների պատմությունը կարելի է բաժանել երեք շրջանի:

Առաջին շրջանում, որ սկսվում է մեր թվագրությունից 6 դար առաջ և տևում մինչև մեր թվագրության IV դարի վերջին քառորդը (375), բոլոր շերքեզ ցեղերը՝ սինտերը, կերկեռները, տոտետները, զիխերը, պսենները, մեոտները և այլք, կոչվում էին մեոտական ցեղեր կամ ուղղակի մեոտներ, որովհետև բոլոր ցեղերի մեջ գլխավորությունը պատկանում էր նրանց: Դրա համար երկիրը ևս հունները անվանում էին Մեոտիա, իսկ Ազովի ծովը՝ Մեոտիս:

Այս շրջանում մեռածների երկիրը հպատակվում էր Ռոսֆորի թագավորությանը 375 թ. հո-
ների արշավանքը քանդեց, կործանեց և վերջ դրեց ինչպես Ռոսֆորի պետությանը, այնպես էլ
մեռածների գլխավորությանը իրենց ցեղերի մեջ: Այդ օրվանից բոլորովին մոռացվեց և մեռա-
բառը:

Երկրորդ շրջանը, որ սկսվում է V դարից և տևում մինչև X դարի վերջերը, կոչ-
վում է զիխլերի շրջան, որովհետև այդ շրջանում ուժեղացան զիխլերը և միավորեցին մյուս ցե-
ղերին: Երկիրը ևս կոչվում էր Զիխլա, որը թևակոխեց նվաճված չէր Բյուզանդական կայսրության
կողմից, բայց տնտեսապես և կուլտուրապես ամբողջովին ենթարկված էր նրան:

Երրորդ շրջանը, որ սկսվում է X դարի վերջերից և տևում մինչև XII դարի երկրորդ
կեսը, կոչվում է կասոխներ կամ կոսոխների շրջան:

Զիխլերը թևակոխեցին իրենց հպատակեցրին շատ ցեղեր, բայց չկարողացան ի մի ձուլել
բոլոր աղիգներին: Նրանց օրոք հարավում շատ ուժեղացան արխագները, իսկ թամանում՝ կա-
սոխները: Կասոխ խոսքը իր զանազան փոփոխումներով՝ կոսոխ, կոսոզ, կասախ, խազուխ,
թեշաթ, քաշալի, քաշոտ և այլն, ունի ալանական ծագում, որոնց հետևորդ օսերը այժմ էլ չե-
րեզներին անվանում են «կաշեկներ»: Առաջին անգամ պատմության մեջ «կասոխ» բառը գոր-
ծածում է բյուզանդական հեղինակ Եպիֆանը (VIII—IX դարերի շեմքում), նա խոսում է
կասոխների և զիխլերի մասին, որպես իրարից տարբեր ժողովուրդների:

Սակայն X դարից սկսած կասոխներն այնքան զարգանում են, որ իրենց մեջ են ձուլում
բոլոր աղիգ ցեղերին, կազմում են մի ժողովուրդ՝ կասոխ կամ կոսոխ անունով: Այդ շրջանում
նրանց երկիրը ևս կոչվում է Կասոխ կամ Կոսոխ: Կիևյան շրջանի ռուս պատմիչները ևս, տառնե-
րորդ դարի վերջերից սկսած, խոսելով Տմուտարականի ռուսական իշխանության մասին, նրա
բնակիչներին միշտ անվանում են կասոխներ կամ կոսոխներ (касоги կամ косоги)¹:

Սև ծովի ծովափին ճանապարհը ստաների համար միշտ ունեցել է մեծ նշանակություն: Այդ
անապարհի վրա զարգացող առևտուրը ապահովելու նպատակով X դարում նրանք բռնե-
րին Սև ծովի հյուսիսային ափի բոլոր գետաբերանները: 965 թ. Կիևի մեծ իշխան Սվյատոսլավ
Իգորևիչը Դոնի գետաբերանում ջարդովիշուր արեց խազարների հսկա բանակը, ընդմիշտ քշեց
նրանց այդ տեղերից: Այնուհետև հարձակվեց խազարներին հպատակ և նրանց օժանդակող
«չասերի և կասոխներ» վրա, այսինքն, ինչպես Կլապրոտն է բացատրում, «մեր օրերի օսերի ու
չերեզների, իսկ միջին դարերի ալանների ու զիխլերի» վրա², որոնց քշեց մինչև Կովկասյան
լեռնաշղթան և հաղթեց: Այս հաղթության հետևանքը եղավ այն, որ ռուսները թամանի թերա-
կեզում, նախկին հունաց Տամուտարիսա քաղաքում, հիմք դրին Տմուտարականի ռուսաց բաժ-
նեկալսածային իշխանության:

1016 թ. ռուսների գինվորական ուժերը ոչնչացրին խազարների իշխանությունը Ղրիմում,
որով և վերջ դրին նրանց իշխանությանը եվրոպայում:

Կիևի մեծ իշխան Վլադիմիրը մեռնելիս կասոխների երկիրը կտակեց իր յոթերորդ որդուն՝
Մստիսլավին, որը 1022 թվականին մենամարտում հաղթեց կոսոխների իշխան Ռետետային և
տիրացավ ամբողջ Կասոխին կամ Քաշոտին:

1023 թվականին, երբ Մստիսլավը Կիևի իշխանական աթոռին տիրանալու նպատակով հար-
ձակվեց յուր եղբոր՝ Յարոսլավ հուճմի վրա, նրա բանակում մասնակցում էին կասոխներն ու
խազարները՝ արդեն որպես նրա հպատակներ: Այսպիսով, սկսած X դարի վերջերից ամբողջ
Չերքեզիան Կիևյան Ռուսիայի մի բաժնեկալսածային իշխանություն էր:

Չերքեզների պատմության երրորդ՝ կասոխական շրջանը զուգընթաց է գնում ռուսաց տի-
րապետության հետ, որը սկսվում է X դարի վերջին և վերջանում XII դարի երկրորդ կեսին:
Ռուսաց տիրապետության օրով, կասոխների գլխավորության ժամանակ չերքեզ ցեղերի
մեջ, Տմուտարականը դարձավ առևտրի մեծ կենտրոն, ծովային ճանապարհով նա կապում էր
Կովկասը Ռուսաստանի, Բյուզանդիայի և ամբողջ Եվրոպայի հետ, իսկ ցամաքային տարանցիկ
ուղիով նրա քաղաքները գնում էին Անդրկովկաս, Հայաստան և այլուր:

Այդ շրջանում, ինչպես Տմուտարականում, այնպես էլ թամանի ամբողջ թերակղզում, կա-
սոխների մեջ ապրել են հայ գաղթականներ, որոնք կոչվել են Կասոխայի կամ Կոսոխայի ճայեթ,
այսինքն, կասոխների երկրում ապրող հայեր, ինչպես կոչվում էին Բուլղարիայում, Ռումինիա-

¹ «История Кабарды с древнейших времен до наших дней», Москва, 1957,
22—25:

² M. G. Klapproth, Memoires prelatifs a l'Asie, Paris, MDCCC XIV, էջ 146:

յում ապրողները՝ ռումինացի, բուլղարացի հայեր, Հայերի կասոխ գալու ժամանակը պետք է որոնել շերթեգների պատմության կասոխական շրջանում, այսինքն X և XII դարերի արանքում:

Այդ հարցի պատասխանը մենք գտնում ենք կոստյահայերի՝ Գալիցիա տեղափոխվելու պատմության մեջ:

* * *

X դարի վերջին և XI դարի սկզբին (992—1025) Հարավային Ռուսաստանում հայ գաղթական զորամասերը երբեմն օգնել են կիևյան ռուս իշխաններին նրանց պատերազմական ֆորժողությունների մեջ և լավ կոմսերի անուն վաստակել: Բարի համբավ են ունեցել և Կոստյայի հայերը: Ռուսաց Գալիչ քաղաքի և ամբողջ Գալիցիայի իշխան Թևոդոր Դմիտրիևիչը, լսելով բաջամարտիկ Կոստյայի զորախմբերի մասին, 1062 թ. առանձին հրովարտակով հրավիրում է նրանց իր երկիրը, որպեսզի միացյալ ուժերով կռվեն լեհաց թագավորի դեմ, փոխաբերելով նրանց խոստանում է զանազան արտոնություններ իր երկրում:

Այստեղ իր հաստատումն է գտնում արժավիրացիների լեզենդր այն մասին, որ հայերը Չերեքեգի և Եկել գետի վրա գրահով, պողպատապատ, ոտներից մինչև գլուխները զինված, որով զրավել են տեղացի իշխանների, ուղղենների ու ժողովրդի ուշադրությունը և արժանացել խոշոր արտոնությունների:

Վրովի հայկական պատմական եկեղեցու կապիտուլում դարեր շարունակ պահված է եղել այդ Թևոդոր իշխանի վերը հիշատակված հրովարտակը. այն տեսել են XIX դարի սկզբին գիտնական Չաչկին, ապա Ջախարյասևիչը, իսկ նրանից էլ առաջ Մինաս Բժշկյանը:

Հրովարտակը գրված է եղել ռուսերեն: Այժմ այդ հրովարտակի բնագիրը անհետացել է, մնացել են միայն նրա լատիներեն և հայերեն թարգմանությունները:

Ջախարյասևիչը ասել է, որ իսկական բնագիրը գրված է եղել ռուսերեն, հին մագաղաթի վրա, հրովարտակի տակ նա չի տեսել ոչ ստորագրություն և ոչ էլ տարեթիվ, այլ միայն կնիքի տեղը և կնիքից մնացած դերձանի վրա կախված մի կտոր մոմ, որի վրա ևս չի եղել մի որևէ նշան: 1062 տարեթիվը նա տեսել է միայն լատիներեն թարգմանության տակ: Ջախարյասևիչը պնդում է, որ նա բնագրի բովանդակությունից շատ լավ է հիշում հետևյալ տողերը՝ „(1) kniasia Teodora Dmitriewicza kosochackim Armenam. Prejdili (прииде) на мою ruku dam wam vlnost na trv lita“². Այս բովանդակությունը ունի և հրովարտակի լատիներեն թարգմանությունը. նա ևս ուղղված է Կոստյայի հայերին, հրավիրում է նրանց իր երկիրը, երեք տարվա բնթացքում խոստանում է ազատել ամեն մի պարհակից և ավելացնում է, որ իր սրբերը գալուց հետո կարող են ազատ ապրել, ուր որ կամենան: Տակը գրված է տարեթիվը՝ 1062 թ.: Այստեղ ևս թարգմանության տակ ստորագրություն չկա: Մակայն այդ զարմանալի չէ, ստորագրության փոխարեն իշխանական կնիքն է եղել, որի մնացորդը տեսել է Ջախարյասևիչը³:

Մինաս Բժշկյանը մեջ է բերում՝ «Բան հրովարտակին թարգմանելու ի նմին ժամանակի ի ռուսի հայ»⁴:

¹ Антоний Петрушевич, О галицийских епископах со времен учреждения галицийской епархии даже до конца XIII в., „Галицийский исторический сборник“, вып. II, Львов, 1854, էջ 122—124, ծան. 41:

² Viadomose o ormenach, W. Polszeze, Bibl. Ossol. 1842, t. I, strona 71.

³ Антоний Петрушевич, նշվ. աշխ., էջ 123, որտեղ բերված է լատիներեն թարգմանությունը. „Ecce Magni Ducis Theodori Dmitriewicz Cosachacensibus Armenis, qui huc volunt venire, venite in anilium meum et ego dabo vobis libertatem ad tres annos et cum fueritis apud me, ubique voluerit, ibit libero“.

⁴ Մ. Բժշկյան, Ճանապարհորդություն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 85: Այս էջերի վրա է և հրովարտակի հայերեն թարգմանությունը՝ «Ահա Մեծի դքսի Թևոդորի որդու Դմիտրևայ առ նաշոխաչեան հայս որք աստ կամին դար, եկեսցեն յօղնութիւն ինձ և ես տաց ձեզ ազատութիւն բնդ ամս երիսու ևս յորժամ լինիցիք առ և իս, ուր հաճեսցի որ երթիցէ ազատորէն: Յամի 1062»:

Այդ թարգմանությունը ոչնչով չի տարբերվում լատիներենից. միայն Coschacensisibus Armeniis (տոտիսայի հայեր) բառերի փոխարեն դրված են «նաշոխաշեան հայս» բառերը: Պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի բացատրությամբ «նաշոխաշեան» խոսքը եղծված «НАТУХАЙ-ЦЕИ» բառն է:

Նաստ-խայ էր կոչվում շերքեզների մի շատ ազգեցիկ ցեղը, որը ապրում էր Գեղենջիկի, Կարադիլիկայի, այժմվա Նովոռոսիյսկի, Անափոցի. Արիևի մոտակա վայրերում և Կուբանի ծովամերձ ավազանում¹: Նրանց մեջ ապրում էին շատ հայեր, որոնք տեղափոխվելով Արմավիր, հիմնեցին իրենց առանձին թաղը և մինչև այսօր կոչվում են նաստ-խայցիներ:

Ինչպես տեսնում ենք, Զախարյասևիչի վկայության համաձայն թե ռուսական բնագիրը, և թե լատիներեն թարգմանությունը խոսում են կոստիսացի հայերի մասին, այսինքն շերքեզա-հայերի մասին:

Հայերեն թարգմանությունը ես խոսում է նույն շերքեզահայերի մասին, միայն անվանում է նրանց «նադուխայցի հայեր», որն ամենևին չի փոխում գործի էությունը, որովհետև նաստ-խայցիք ևս նույն կոստիսներն են, նույն շերքեզները: Նաստ-խայցիների բնակավայրը ամբողջովին մտնում էր Կասոխի կամ կոստիսների երկրի մեջ:

Կաստիսների պատմությանը անտեղյակ մարզիկ զանազան սխալ ու անհիմն ենթադրություններ են անում: Օրինակ՝ աստվածաբան Անտոն Պետրուշևիչը առանց որևէ լուրջ հիմունքի ենթադրում է, որ լատիներեն թարգմանությունը սխալ է կատարված, դիմումը պետք է ուղղված լինի ոչ թե կոստիսացի, այլ սուխումցի հայերին²: Իր դրույթը ամրապնդելու համար նա հենվում է կաթոլիկների միտրոպոլիտ Սեստրենցևիչ-Բոգուշի և Կարամզինի հեղինակության վրա, որոնք խոսելով Ախսարայից դեպի Ղրիմ 1330 թվականին տեղի ունեցած գաղթի մասին, հենվելով Հովսեփ Արղուսթյանի՝ 1789 թ. իշխան Գրիգորի Պոստոլկինին ներկայացրած զեկուցագրի վրա, գրում են, որ եկվոր հայերը Ղրիմում բնակություն հաստատեցին Թեոդոսիայում, Սուտաղում, Սուխումում և այլ տեղերում³:

Այդ ամենը ճշմարիտ է, բայց Պետրուշևիչը մի շատ կարևոր բան է մոռանում: Արղուսթյանը, Սեստրենցևիչ-Բոգուշը և Կարամզինը խոսում են XIV դ. (1330) տեղի ունեցած դեպքի մասին, իսկ մեզ հետաքրքրում են XI դ. (1062) տեղի ունեցած դեպքերը: Այդ հայերը որոնց մասին խոսում են պատմաբանները, միայն 1330 թ. են հեղել Ղրիմ: Պրոֆեսոր Յուրգենիչը ևս կատարում է նույն սխալը. նա ևս հենվելով Արղուսթյանի զեկուցագրի վրա գտնում է, որ Cosochalenses նշանակում է հին-ղրիմցի կամ կազարաթցի⁴:

Իզուր է հարգելի հեղինակը նույնացնում Կազարաթ և Հին-Ղրիմ բնակավայրերը. ճիշտ է, նրանք եղել են իրար մոտ, բայց տարբեր բնակավայրեր են. Կազարաթ այժմ ավերակ է, իսկ Հին-Ղրիմը դեռ կանգուն է: Բոլորովին անհասկանալի է, թե ինչու է «կոստիսացի» բառը դառնում սուխումցի, կազարաթցի կամ հին-ղրիմցի, ինչու է այն համարվում աղավաղված, բանի որ նա ամենևին աղավաղված չէ. բանի որ նրա իմաստը լիովին համապատասխան է պատմական ճշմարտության:

Ոչ որ չի կարող ժխտել, որ շերքեզները X—XII դարերում կոչվել են կաստիսներ կամ կոստիսներ, որ նրանց երկիրը ևս կոչվել է Կասոխ և ոչ որ չի կարող ժխտել, որ նրանց երկրում դարեր շարունակ ապրել են հայեր, որոնք կոչվել են կոստիսացի հայեր:

Կոստիսացի հայերը շերքեզահայերն են, նրանց նախնիքը Խեոդոր իշխանի հրովարտակի գլխավոր արժեքը այս հարցում այն է, որ նրանից մենք իմանում ենք, որ հայերը 1062 թվականին արդեն բնակվում էին Կոստիսում և քաջ մարտիկների համրավ էին վաստակել: Պարզ է, որ նրանց մուտքը Կոստիս պետք է որոնել 1062 թվականից առաջ:

Կոստիսի կամ Կասոխի հայ գաղթականության պատմությունը չի կարելի համարել մի ինքնուրույն, բնահանուր հայկական գաղթից բոլորովին անջատ, առանձին երևույթ:

¹ К. Сталь, Этнографический очерк черкесского народа, Кавказский сборник, т. XXI, Тифлис, 1900, էջ 93:

² Антоний Петрушевич, «Уг. ш.», էջ 123—124:

³ Станислав Сестренцевич-Богущ, История о Таврии, СПб, 1806, т. II, էջ 176—178:

⁴ «Записки Одесского общества истории и древностей», т. V, 1863, պրոֆ. Յուրգենիչի հոդվածը, էջ 828:

Նա մի փոքրիկ մասն է այն տհուլի աղետի, այն մեծ գաղթականության, որին ենթարկվեց հայ ժողովուրդը XI դարի առաջին կիսում:

Այդ ժամանակվա բյուզանդական կառավարության, Բարսեղ II-ի և նրա ժառանգների անհեռատես և քայքայիչ քաղաքականությունը Հայաստանում, հայ գաղթական թագավորներին իրենց զորքերով բռնի գաղթեցնելը դեպի Անտիոքի շրջանի Երկրները, հայ իշխաններին իրենց զորամասերով և բնաբնակներով բռնի Բուլղարիայի սահմանները բռնելը, կրոնական հալածանքները հայերին զայրացրել էին Բյուզանդիոնի դեմ: Բյուզանդական կառավարությունը նպատակ ուներ Հայաստանի ներսում թուլացնել նրա ռազմական կարողությունը, չեզոքացնել բնագործարար ուժերը, հայերի ձեռքով պահպանել իր սիրիական և բուլղարական սահմանները և ցրելով հայ ժողովրդի զանգվածները քանակով ավելի հույների մեջ, ծուլել նրանց հունաց հետ:

Այս անիմաստ քաղաքականությունը կորստաբեր եղավ ոչ միայն հայերի, այլև հույների համար. նա շատ նպաստավոր պայմաններ ստեղծեց սելջուկ թուրքերի համար, նրանց առաջ բաց արեց Հայաստանի և Բյուզանդիայի դռները:

Սելջուկների մահաբեր, անզաղար կրկնվող աշխարհավեր ու բարբարոս արշավանքների ժամանակ ոչ միայն հալածակալում էր ժողովրդի դույքը, ամայանում երկիրը, այլև հորով ու սրբով ոչնչանում էր և ժողովուրդը: Ահ ու մահ էր իշխում ամբողջ երկրում: Բյուզանդական բանակը չկարողացավ կտրել սելջուկների ճամփան: Վտանգի էր մատնված հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը: Իրենց գլուխները փրկելու համար հայ աշխատավոր ժողովրդի ղեկավար զանգվածները և զորաջոկատները թողած հայրենի օջախները, երկրից երկիր ընկած, որոնում էին կյանքի և գույքի ապահովություն խոստացող մի հանգրվան: Գաղթականության հոսանքը զնաց երկու ուղղությամբ, մեկը՝ դեպի Միջերկրականի, մյուսը՝ Սև ծովի ափերը: Սինոպը, Տրապիզոնը, Ղրիմը, Թամանը և Հարավային Ռուսաստանը դարձան հայ գաղթականության նոր ապաստաններ:

Թամանը շերքեզների կենտրոնական բնակավայրն էր:

Սկիական Կորիանդցին, Հերոդոտը, Սարաբոնը և այլ հին պատմիչներ հաստատում են, որ շերքեզները ապրել են Աղովի և Սև ծովի ափերին: Ճենովացի Գեորգ Թալիանը 1504 թ. նույնն է հաստատում, գրելով. «Ապրում են նոքա (շերքեզները—Խ. Փ.) Տանա (Դոն) գետից բռնած ամբողջ ծովափով (Աղովի — Խ. Փ.) մինչև Ասիայի սահմանները, Տանայից մինչև կիսմերսացոց Բոսֆորը (Կերչ — Խ. Փ.)... այդտեղից ամբողջ ծովափով (Սև ծովի — Խ. Փ.) մինչև Բուսի հրվանդանը և Ֆադիս գետը, որը կաղմում է Արևադիտյի սահմանը»:

Այսինքն՝ շերքեզները բռնած են եղել երկու հարուստ ծովերի գեղատեսիլ ափերը, առողջ կլիմայով, մաքուր օդով ու անուշ ջրով, առևտրի համար հարմար նավահանգիստներով և արդավանդ հողերով: Հայ գաղթականները իրենց ուշադրությունը դարձրին այդ գրավիչ ափերին և կանգ առան այդ վայրերում:

Ինչպես տեսանք վերևում, X դարում ռուսները գրավել էին արդեն Սև ծովի հյուսիսային ափի բոլոր գետաբերանները, ոչնչացրել խաղաղների տիրապետությունը Թամանում ու Ղրիմում, իրենց հպատակեցրել բոլոր կոստյաններին և նրանց երկրում՝ Թամանում, հիմնել Տմուտարականի ֆեոդալական իշխանությունը:

Այդ բոլոր վայրերն էլ սիրով բնակեցրին հայ գաղթականներին: Գաղթականության հոսանքը տեղի ունեցավ առանձին-առանձին խմբերով, որոնք հաստատվեցին թե՛ Հարավային Ռուսաստանում, թե՛ Ղրիմում և թե՛ Թամանում:

Այդ գաղթականության մի զգալի մասը մտավ Մուլլափիա, Վալախիա, Բուկովինա, Գալիցիա և Տրանսիլվանիա, որտեղ XI դարում հիմնվեցին հայ գաղութներ²:

Կաստիլի հայ գաղութը այդ մեծ գաղթականության մի բեկորն էր միայն:

¹ Георгий Талнан, Рассказ о быте и правах черкесов, составленный в 1504 г., СПб, 1870, էջ 14—22:

² Ս. Տ. Երեմյան, Մ. Ս. Հասրաթյան և ուրիշ, հայ ժողովրդի պատմություն, առաջին մաս, Երևան, 1956, էջ 346:

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԵԿՈՐԵՐԸ
ՉԵՐՔԵԶԻԱՅԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

Մոսկվայի Հնագիտական ընկերության արշավախումբը 1869 թվականին պեղումներ կատարելով նախկին Չերքեզիայում (այժմ ադիգների ավտոնոմ մարզ), Բելոռեչենսկայա և Խանսկայա ստանիցաների միջև, Բելայա գետի ափին, հայտնաբերել է վաղուց արդեն հողով ծածկված մի բանդված եկեղեցու ավերակները: Հողի տակից հանած քարերի մեջ գտնվել է մեկը հետևյալ հայկական արձանագրությամբ. «Կատարեցար եկեղեցիս ձեռամբ քարագործիս Մ... րպէին, «Հայոց ՈՒ-ն» (620) այսինքն՝ 1171 թ.՝:

Այդ քարը այժմ գտնվում է Թրիլիսիի պատմական թանգարանում:

Սա անհերքելի կերպով ապացուցում է, որ XII դարում արդեն հայերը ապրել են այդ վայրերում:

Հայ պատմագետներից այդ քարի մասին առաջինը կարծիք է հայտնել Լազարյան ճեմարանի հայոց լեզվի ուսուցիչ Խաչատուր Քուչուկ-Հովհաննիսյանը: Հաստատելով, որ XII դարում սրդեն հայեր են ապրել Հարավային Ռուսաստանում, նա գտնում է, որ այդ գաղթականությունը եկել է ոչ թե Կովկասյան լեռնաշղթան կտրելով, այլ արևմուտքից, ավելի շուտ Բալկաններից: V դարից սկսած պարսից կրոնական հալածանքները, VII դարից արաբական ճնշումները միջուկում են տվել հայերին գաղթել դեպի քրիստոնյա բնակչություն ունեցող Բյուզանդիան և Բալկանյան թերակղզին, որտեղից և կարող են եկած լինել Չերքեզիա:

Քուչուկ-Հովհաննիսյանի այս կարծիքը այժմ արդեն մերժված է գիտության կողմից:

Հայտնաբերված եկեղեցին մի մեծ քարաշեն տաճար է եղել: 1171 թ. այդպիսի տաճար չի նկատ համար հարկավոր էր, որ հայերը մինչև այդ թվականը կազմած լինեին մի ուժեղ համայնք: Հայտնի է, որ հայ գաղթականները իրենց նոր բնակավայրերում, սկզբներում առհասարակ չէին փոքրիկ աղոթատներ, մատուռներ, հետո՝ փայտաշեն եկեղեցիներ և ապա՝ համայնքի ուժեղանալուց հետո միայն՝ քարաշեն եկեղեցիներ: Այդպես է եղել Լվովում և Լեհաստանի այլ քաղաքներում, այդպես է եղել Ղրիմում, Ռումինիայում, Նոր-Նախիջևանում և այլ գաղթավայրերում: Չերքեզիայում հայերը թեպետ ցրված էին ամբողջ երկրում, Անապայից, Գեկենջիկից և Թամանից մինչև Էյրուրուսի ստորոտներն ու Լեռնադիպի սահմանները, նրանց հիմնական մեծամասնությունը այդ շրջանում ապրել է Կուրիանի և Լառայի միջնադաշտում. այդտեղ Բելայա գետի ձախ ափին է գտնվել հայերի կենտրոնը՝ Դյաուրխաբլը (արմավիքիների արտասանությամբ ճիսուրխաբլը), նրանից ոչ հեռու—հայկական նգերուխայ և Ագիխոյ աուլները, որոնք միշտ վեկավարներ են հանդիսացել չերքեզահայերի հասարակական կյանքում:

Չերքեզահայերը անշուշտ ունեցել են և ուրիշ եկեղեցիներ, որոնք նմանապես բանդված են և առայժմ նրանց տեղերն անհայտ են:

Ակամա հարց է ծագում: Այդ տեղերում հայերը միշտ ապրել են, բայց ինչու են նրանց եկեղեցիները բանդվել:

Պատճառը Ռուսաստանի և Թուրքիայի միջև Սև ծովի, Ղրիմի ու Կովկասի տիրապետության շուրջը մղված մեծ և դարավոր պայքարն էր: Կովախնձորը Սև ծովի ջրային ճանապարհն էր, որ դարեր շարունակ զբաղեցրել է Ռուսաստանին և որը Բյուզանդական պետության անկումից (1453) և Կաթան ճենովացոյ ձեռքից խլելուց (1475) հետո ամբողջովին անցել էր Թուրքիայի ձեռքը:

Պետրոս I կայսրը 1696 թ. վերցրեց Ազովի բերդը, որպեսզի Ազովի ծովով ելք ունենա դեպի Սև ծովը, բայց քանի որ Ղրիմի խանությունը Թուրքիայի վասալն էր, իսկ նրա հարավային ծովափնյա մասը ամբողջովին պատկանում էր Թուրքիային, Սև ծովի դռները Կերչի նեղուցում միշտ փակվում էին Ռուսաստանի առաջ: Սև ծովի ծովային ճանապարհին տիրելու համար հարկավոր էր նախօրոք նվաճել Ղրիմի և Թամանի թերակղզիները:

Թուրքերը խիստ վախենում էին, որ պատերազմի դեպքում չերքեզները, որոնց մեծ մասը իրենց քրիստոնյա էր համարում, կարող են անցնել քրիստոնյա ռուսների կողմը: Ղրիմը V դարից

¹ X. И. Кучук-Нозанесов, Христианская надпись XII столетия, «Материалы по археологии Кавказа, собранные экспедициями Московского археологического общества», вып. III, Москва, 1893, էջ 106—109:

սկսած դարձել էր Բյուզանդական զաղութ, Բյուզանդիայի հենակետը Սև ծովի ավազանում: V—VI դարերում հույները հաստատեցին խոշոր առևտրական կապեր չերքեզների հետ: Չերքեզները այդ ժամանակները կոչվում էին զիլեհ, իսկ նրանց երկիրը՝ Ձիխա: Հույները բերում էին իրենց արդյունաբերական ապրանքները և փոխաբեր ստանում Ձիխայի հարուստ հումքը: Առևտրի շնորհիվ Ձիխայում աճեց ու մեծացավ հունաց ազդեցությունը, որը հնարավորություն տվեց նրանց հեթանոս չերքեզների մեջ քրիստոնեություն տարածել: Վերջինս այնքան տարածվեց, որ VI դարում Ձիխան ուներ երկու հոգևոր թեմ՝ Ֆանագորիայի և Ձիխայի¹:

Չերքեզների մեջ քրիստոնեության տարածմանը մեծ դեր է տվել Հուստինիանոս կայսրը (527—565): Նա ուղարկել է բարոզիչներ, լեռներում շինել է եկեղեցիներ և վանքեր, որոնց ավերակները իրենց հունական արձանագրություններով մինչև այսօր էլ մնում են կանգուն: Չերքեզների մեջ նա ունեցել է մեծ հեղինակություն, նրա անունով, գահով ու սեղանով ժողովուրդը երգվել է, նրան գովարանող ժողովրդական երգերը մինչև այժմ էլ պահպանված են²:

Դարեր շարունակ տեղեց քրիստոնեության տարածումը ադիգների մեջ, սակայն չկարողացավ խոր արմատներ ձգել: Ձևականորեն ընդունելով քրիստոնեությունը, նրանք անշեղ պահում էին և իրենց հեթանոսական սովորություններն ու ծեսերը:

1235 թ. չերքեզների մայրաքաղաք Մատրիկան (Թաման) այցելած դոմինիկյան կարգի կաթոլիկ միսիոներ Յուլիանը գրում է, որ չերքեզները իրենց համարում են հունադավան քրիստոնյաներ, ունեն եկեղեցիներ, բահանաներ և եկեղեցական զորքեր հունարեն լեզվով, բայց չեն հրաժարվել և իրենց հեթանոսական ծեսերից: Նա ասում է, որ երկրի քրիստոնյա չերքեզ իշխանը ունեցել է 100 կիներ: Նույնը հաստատում է. բազմաթիվ փաստեր մեջ բերելով, ճանվացի Գեորգ Թախանը իր 1504 թ. գրած, չերքեզների կենցաղավարության նվիրված ընդարձակ նկարագրության մեջ³:

Այսպիսով, կարելի է ասել, որ չերքեզները կիսահեթանոս, կիսաքրիստոնյաներ էին:

Մի բան միայն հաստատ է, որ երկրում տիրում էր կրոնական մեծ հանդուրժողություն և չկար հալածանք քրիստոնյաների դեմ:

Քրիստոնեության զարգանալու ու խոր արմատներ ձգելու առաջն առնելու նպատակով 1717 թ. Քուրբիայի սուլթան Մուրադ IV-ը հրամայեց իր վասալներին՝ Ղրիմի Դևլեթ-Գիրեյ և Կադի-Գիրեյ խաներին, որ նրանք մեծարանակ գինված ուժերով մտնեն Չերքեզիայի սահմաններ և հրով ու սրով արմատախիլ անեն քրիստոնեությունը:

Խաները բառացիորեն կատարեցին իրենց տիրող տված հրամանը: Նրանք իրենց հետ բերեցին բազմաթիվ մուլաներ, ֆանատիկոս քուրդիչներ, խոշոր հրոսակախմբեր, քանդեցին ու կրակի մատնեցին ամբողջ երկրում բոլոր քրիստոնեական տաճարները, վանքերը, սպանեցին հոգևորականներին, չերքեզների շոգեններին. ոչնչացրին եկեղեցական անոթները, կահույքը, ալյուրեղեն բոլոր եկեղեցական զորքերն ու զգեստները: Հայերը, իհարկե, չէին կարող բացառություն կազմել:

Այդ փոթորկի ժամանակ անշուշտ քանդված են և հայկական եկեղեցիները, այրված՝ եկեղեցական զորքերը:

Խաները առաջին ամիսներին իրենց հրոսակախմբերով շրջեցին ամբողջ երկիրը, քանդեցին ու այրեցին ամենը, ինչ կարող էր կապ ունենալ քրիստոնեության հետ, ապա վրաններ ձգեցին ու երկար ժամանակ կանգ առան այժմյան Խանսկայա ստանիցայի տեղում, որի անունը ծագում է այդտեղից: Խաների ծայրահեղ շոջուլության, անառակության, բարբարոս ու անբարոյական վարքի մասին տեղացիները մինչև այսօր էլ պատմում են զարհուրելի բաներ:

¹ Е. И. Алексеева, Материалы к древнейшей и средневековой истории адыгов (черкесов), «Труды Черкесского научно-исследовательского института языка и литературы», вып. II, 1954, էջ 223:

² Ш. Ногмов, История адыгейского народа, Нальчик, 1947, էջ 38:

³ Рассказ римско-католического миссионера доминиканца Ю. иана о путешествии в страну приволжских венгерцев, «Записки Одесского общества истории и древностей», т. V, Одесса, 1863, էջ 998—1002:

⁴ Георгий Талиан, նշվ. աշխ., էջ 11—22: Նույնը տպագրված է՝ «Кубанский сборник», т. V, Екатеринодар, 1899, էջ 17—21:

Ահա այդտեղ և կամ անմիջապես դրա կողքին է գտնվել ներկայումս հայտնաբերված հայոց քանդված եկեղեցին:

Թաթարները շերտերով լցնելու իսլամացրին, բայց նրանք դեռ տասնյակ տարիներ գաղտագողի աղոթում էին քրիստոնյաների նման: Հայերը չփոխեցին իրենց հավատը, բայց զրկվեցին իրենց եկեղեցիներից և իրենց հոգևոր կարիքները հոգացող հոգևորականությունից: Եկեղեցիները քանդված էին, լուկ էին նրանց գանգակները, որոնցից մի քանիսը թաքցրել էին լեռներում ու անտառներում: Նրանք աղոթում էին թաքուն, միայն գիշերները:

Ինչպես տեսնում ենք, հայտնաբերված բարը իր հայրեն արձանագրությամբ ամբողջովին հերքում է հայերի գաղթի՝ Իվանովի ենթադրած 200 տարվա, իսկ Շչերբինայի՝ երեք կամ հինգ հարյուր տարվա վաղեմիության վերստին:

Հայերի մուսորը Չերքեզիա եղել է շատ ավելի վաղ ժամանակներում:

* * *

Պատմական Չերքեզիայի սահմաններում, ներկայիս կարաչայ-չերքեզների ավտոնոմ մարզում, Մեծ Զելենուկ գետի միջին հոսանքից ոչ հեռու, գտնվում են Լերե հինավուրց եկեղեցիներ, որոնց ծագումը մինչև հիմա չի պարզված և շատ վիճելի է:

Ոմանք կարծում են, թե նրանք շինված են հունաց ձեռքով, դեռ Հուստինիանոս կայսեր (527—565) ժամանակ, ոմանք վերագրում են IX—XI դարերին՝ ռուսաց Տմուտարականի ֆեոդալական իշխանության ժամանակներին, իսկ ոմանք էլ հաստատում են, որ այդ եկեղեցիները շինված են ճևնովացիների ժամանակ (XIII—XV դդ.): Բելյորեչենսկայայի քանդված եկեղեցու 1869 թ. պեղումների ժամանակ հայկական արձանագրությունը գտնվելուց հետո պատմաբանների կարծիքը թերվեց ավելի X—XI դարերի կողմը և խոր կասկածի տակ ընկավ նրանց հունական ծագումը:

Հայտնի կովկասագետ և հնագետ Վ. Սիսոևի կարծիքով հայերեն արձանագրության Լերե գաղթի շատ մեծ նշանակություն ունեցող երևույթ է, որը կարող է մանրագին պեղումներից հետո հեղաշրջել Զելենուկի, Խուստարիի և այլ եկեղեցիների մասին մինչև այժմ գոյություն ունեցող կարծիքները:

Դժբախտաբար, այդ պեղումները մինչև այսօր չեն կատարված: Զելենուկի Լերե եկեղեցիներից երկուսը մեծ են, իսկ մեկը՝ փոքր: Մեծ եկեղեցիներից մեկը, որ ըստ Ստալի տեղացիք անվանել են «Յաժումխարառ», իսկ ըստ տեղացի հայերի՝ «Յաժում խորան»³, այժմ բավարար դրության մեջ է, որովհետև այնտեղ անցյալ դարի առաջին կեսից բացված է ռուսական արական վանք, ուստի քանդակների անդամ ենթարկված է վերանորոգման: Երկրորդ փոքր եկեղեցին ունի քառակուսի ձև, նրա գմբեթը հենված է չորս ամուր սյուների վրա, նմանապես վերանորոգված է և այժմ ծառայում է իբրև շտամարան:

Երրորդ եկեղեցին, որ գտնվում է շատ խաբխուղ դրության մեջ, ամենամեծն է, նրա ճարտարապետական ձևավորումը շատ հետաքրքիր է: Ներսից վերևի կամարակապ քարերը ընկնելու վրա են, կտորի վրա ծառեր են բուսել: Այս եկեղեցին եղել է ըստ երևույթին մայր տաճար, ունի ընդարձակ բեմ, Լերե խորան, բեմի վրա մնացել է կիսակլոր մեծ նստարան, Լերե բարձրաստիճան միաբանների նստելու համար⁴:

1940 թվականին այս մեծ եկեղեցու ներսում, հարավ-արևմտյան պատի մոտ, պեղումների ժամանակ հողով ծածկված հատակի տակից հայտնաբերել են տաշած ու շերտավոր քարերից շինած երկու մետր երկարությամբ մի մեծ արկղ, որ պեղումները կատարողները համարում են դամբարան, թեպետ նրա մեջ կմխք չեն գտել: Այդտեղ հայտնաբերվել են 19 տեսակի թանկ-

¹ В. Сысоев, Поездки на реки Зеленчук, Кубань и Теберду летом 1895 г., «Материалы по археологии Кавказа», вып. VII, Москва, 1898, էջ 132:

² К. Сталь, նշվ. աշխ.:

³ Չերկասկի հին հայերի ասելով եկեղեցին իր խորանի տակ ունի երկրորդ գետնահարկ խորանը, դրա համար էլ կոչվել է «Յաժում խորան» (Պ. Փ.):

⁴ Այս երրորդ եկեղեցու մասին տեղեկությունները մեզ հայտնի է Կաբարդինա-Բալկարիայի գիտա-հետազոտական ինստիտուտի աշխատակից, պատմաբան-հնագետ դոկտոր Պանայոտ Դեորզի Ակրիտասը:

արժեք իրեր՝ բազմաթիվ ոսկեղեն առարկաներ, մատանիներ, օղեր, մեծ քանակով զարդասեղ-ներ, թանկագին քարեր, ակեր և ամենագլխավորը՝ Աշոտ Բագրատունու մատանի-կնիքը առա-րական մակագրությամբ¹։

Այս խոշոր գյուտը Հյուսիսային Կովկասի հայերի և առհասարակ բնդհանուր հայոց պատ-մության համար մեծ նշանակություն ունեցող դեպք է և կարող լուրջ ուսումնասիրության։

Այդ գանձը 1941 թ. հանձնված է Մոսկվայի պատմական թանգարանին։ Մատանու վրայի արաբական մակագրությունը կարդացել է պրոֆեսոր Կրաչկովսկայան, նշանակում է՝ «Աշոտ որդի Սմբատի»²։

Գանձի մեջ գտնված մեծ քանակով կարմիր ակերը առանձին ուսումնասիրության են ենթար-կել պրոֆեսորներ Վ. Ի. Կրիժանովսկին և Բարսեղյանը՝ նրանց կարծիքով ինչպես մատանու, այն-պես էլ մյուս կարմիր քարերը ավանդիկներ են, որոնց հայրենիքն է հանդիսանում Հնդկաս-տանը։ Պեղումները կատարող Հայպանովը նշում է, որ ոսկեղեն իրերի և բոլոր զարդերի գեղար-վեստական ձևավորումն ու աշխատանքի նորությունը վկայում են արտադրող ժողովրդի բարձր մշակույթը³։

Գծրախտաբար, մինչև այժմ չի ուսումնասիրված, թե 1940 թ. գտնված այդ գանձի բովան-դակությունը կազմող առարկաները ինչ ծագում ունեն և որտեղ են պատրաստված։

* * *

Այդ եկեղեցիներից մոտավորապես 150—200 մետր տարածության վրա գտնվում են մի բաժանված մեծ քաղաքի ավերակներ, երևում են խոշոր շենքերի քարաշեն պատերը և հիմքերը։ Ավերակների երկարությունը հասնում է մոտ նրկու կիլոմետրի, իսկ լայնությունը՝ կես կիլո-մետրի։ Շենքերի հիմքերը շարված են գլեղեցիկ տաշած շերտաքարերով, քարերը միացված են կավի ցեխով և կամ ուղղակի շարված են իրար վրա առանց բրնձ շաղկապող նյութի։ Փողոց-ները նեղ են և ծուռումուռ։ Քաղաքի կենտրոնում կանգնած է մի կիսաքանդ եկեղեցի, որի պե-ղումներով զբաղվել է Մոսկվայից եկած ճարտարապետների արշավախումբը, որը եկեղեցու գի-տական նշանակություն ունեցող մասերը տարել է Մոսկվա։

Այս տեղեկությունները մեզ հայտնել է հնագետ ղոցենտ Պանայոտ Ակրիտսյանը, որի կար-ծիքով այդ եկեղեցին ամենայն հավանականությամբ հայկական է։ Նա նշում է, որ այն շատ նման է հին հայկական եկեղեցիներին, մանավանդ նրա խորանը խիստ հիշեցնում է մեր եկեղեցիների սեղանները։

Իհարկե, միայն պեղումները կարող են որոշել ինչպես քաղաքի, այնպես էլ եկեղեցիների պատկանելությունը։

Հայպանովը ասում է, որ բավական հարավային ողակում նկատելի են ոսկու և երկաթի հան-քահորերի հետքեր⁴։

Ն. Մուրզակևիչը դեռ 1837 թ. հաստատում էր, որ ճենովացի շերքեզների լեռներում ունեցել են արծաթի հանքեր և հումքը ցամաքով բերելով Մոսկովյան (Թաման), նավերով արտահանել են իրենց երկիրը⁵։

Քաղաքը և եկեղեցիները գտնվում են Սև և Ազովի ծովափերներից Կուբանի ափերով Անդր-կովկաս տանող տարանցիկ առևտրական ճանապարհի վրա։

Ըստ Դյաչկով-Տարասովի այդ ավերակ քաղաքի և եկեղեցիների վայրը միջին դարերում կոչվել է Ասպե (Aspe)⁶։

¹ В. А. Крачковская, Печать Багратида Ашота с арабской надписью, «Краткие сообщения о докладах и полевых исследованиях Института истории маге-риальной культуры», вып. XII, М.—Л., 1946, էջ 112—117։

² Նույն տեղում, էջ 116 և Հայպանով, Աշոտ Բագրատունու կնիքը, Տեղեկագիրք, 1954, № 2։

³ Х. О. Лайпанов, К истории карачаевцев и балкарцев, Черкесск, 1957, էջ 52—54։

⁴ Նույն տեղում, էջ 52։

⁵ Н. Мурзакевич, История генуезских колоний в Крыму, Одесса, 1837.

⁶ Дьячков — Тарасов, Сентинский храм, «Кубанский сборник», т. V, Ека-теринодар, 1899-

Ակադեմիկոս Բուսկովը գտնում է, որ այդ բաղարն ու եկեղեցիները հիմնված են Տմուտա-րականի ռուս ֆեոդալական իշխանության օրոք (X—XII դդ.)¹։ Այդ շրջանում շերքեզները կոչվում էին կասոխներ կամ կոսոխներ։ Քամանում ապրում էին հայեր, որոնք կոչվում էին կոսոխացի հայեր։

Ինչպես արդեն վերը ասացինք, այս Ասպեի ավերակների ու եկեղեցիների հիմնադրության մասին կա երեք կարծիք։ Ռմանը դրանք համարում են հույներից մնացած, ռմանը վերագրում են ռուսներին, իսկ ուրիշները՝ ճենովացիներին։ Այս երեք հիմնական կարծիքներին կարելի է ավելացնել և շորրորդը։ Անվիճելի է, որ Ասպեն մի գաղութ է։ Քաղաքն ու եկեղեցիները անշուշտ կառուցել են գաղթականները։ Բայց ովքե՞ր են եղել այդ գաղթականները։

Արդյոք Ասպեն կառուցվել է ռուսաց Տմուտարականի իշխանության (X—XII դդ.), թե ճենովացոց տիրապետության ժամանակ (XIII—XV դդ.) մի առանձին նշանակություն չունի։ Այդ երկու շրջաններումն էլ գաղութային առևտրի մեջ շատ կարևոր դեր են խաղացել հայ գաղթականները։ Անկարելի բան է, որ Անդրկովկաս, դիտավորապես Հայաստան տանող տա-րանցիկ ճանապարհի վրա հիմնադրված գաղութում հայերը շինարար դեր չխաղային։

Պատմագիտության մեջ ճանաչված և անվիճելի փաստ է, որ հայերը Կաֆայում և Ղրիմի այլ վայրերում, Մատրիկայում, Կոպայում և Քամանի այլ տեղերում, Տանայում և այլուր ճենովացիների օրոք և նրանցից էլ շատ առաջ առևտրական աշխարհում կատարել են կարևոր դեր։

Սևծովյան ավազանի ճենովական առևտրի պատմության խոշոր մասնագետ Բաուրմանուս ասում է, որ ոչ միայն Ղրիմում, այլև Սև ծովի բոլոր նավահանգիստ ունեցող առևտրական բնա-կավայրերում միջին դարերում առաջին տեղն են բռնել հայերն ու հույները²։

Վերջին տասնամյակներում հայտնաբերված նոր իտալական փաստաթղթերի ուսումնասի-րության հիման վրա Զեվակին և Պինչկո պատմաբանները հաստատում են, որ ճենովական գա-ղութների կենտրոն Կաֆայում հայերը կազմել են բնակչության 2/3-ը, իսկ նրա անկումից քիչ առաջ (1475) բնակչության բնդհանուր թիվը եղել է 70 հազար, որոնցից միայն շուրջ հազար հօգի եղել են իտալացիք (Atti, VII, f. 2, p. 168, 177, 206)³։

Նրանց հետազոտության համաձայն գաղութների կառավարության մեջ քաղաքական հե-ղեմոնիան եղել է ճենովացիների, իսկ տնտեսական կյանքի առաջնությունը՝ հայ առևտրական բուրժուազիայի ձեռքին, որը իտալական դրոշակի տակ կատարվող գաղութային առևտրի մեջ խաղացել է որոշիչ դեր⁴։

Մեզ հասել է Կաֆայի կառավարության 1455 թ. սեպտեմբերի 6-ի վճիռը, որտեղ, իմի-ջիայրոց, ասված է՝ «երկիրը այս մեծավ մասամբ բռնում են հայերը, որոնք մեր հավատարիմ և պատվավոր առևտրականներն են»⁵։

Բաուրացի վաճառականների մեծ մասը եղել են եկվորներ, որոնք այցելել են Ղրիմ և կա-տարելով իրենց առևտրական գործերը, վերադարձել են տուն։ Մյուս նշանակալից մասը ապրել է ծովափնյա քաղաքներում։ Տարանցիկ առևտրով զբաղվողները եղել են մեծ մասամբ տեղական պայմաններին որոշ չափով ծանոթ հայերը և հույները։ XI դարի սկզբին արդեն հայերը Ղրիմում ունեցել են իրենց բարաչեն եկեղեցիները⁶։ Ճենովացիներից շատ առաջ Ղրիմի և տրն-տեսապես նրա անբաժան մասը կազմող Քամանի հայերը վարել են խոշոր առևտուր Կովկասի, Անդրկովկասի, Ռուսաստանի և Բյուզանդիայի հետ։

Հայերի մեծ դերը միջնադարյան Ղրիմում, Քամանում ու ամբողջ Չերքեզիայում, Ասպեի տարանցիկ առևտրական ուղու վրա գտնվելը, Աշոտ I-ի մատանի-կնիքի հայտնաբերումը, երկ-րորդ եկեղեցուն՝ «Յաժումխարս» կամ «Յաժում խորան» ժողովրդի տված անունները, պատմա-

¹ «Вестник Европы», СІІ6, 1822, № 23, ան'ս Բուսկովի հոդվածը։

² G. Bratianou, Recherches sur le commerce Genuis dans la mer Noire en XIII siecle, Paris, 1929, էջ 173։

³ Зевакин и Пинчко, Очерки по истории генуезских колоний на Запад-ном Кавказе в XIII—XV вв., «Исторические записки», 1958, № 3, էջ 72—127։

⁴ Նույն տեղում, էջ 127։

⁵ Л. М. Меликсет-Бек, Из истории русско-армянских отношений, Հայ-կական ՍՍՏՖ-ի Տեղեկագիր (հաս. դիտ.), 1954, № 4, էջ 28։

⁶ «Армянские надписи на юге России», «Записки Одесского общества истории и древностей», т. VI, Одесса, 1867, էջ 328։

րան և հնագիտության տեղյակ գոյննոտ Ակրիտասի կարծիքը՝ բաղարի եկեղեցու հայկական բնույթի մասին, — այս ամենը իրավունք են տալիս մեզ ենթադրելու, որ այդ բաղարի գաղթական բնակչության կազմում եղել են և զգալի թվով հայեր:

Մայր տաճարի ներսում թաղվելու կամ այնտեղ փոքրելու, գանձ պահելու համար անհրաժեշտ էր կամ նրա տերը լինել և կամ ունենալ տիրոջ հավասար իրավունք:

Միայն պեղումները կարող են պարզել այս կնճոռոտ խնդիրը:

Չերքեզահայերի նախկին բնակավայրերից մեկում՝ Մայկոպի մոտերքը, Դախուսկայա ստանիցայի ծայրամասում, որտեղից Չերքեզահայերը հեռացել էին 1835 թ. և անցել ռուս զորքերի կողմը, ուղիղ հարյուր տարի անցնելուց հետո, 1935 թ. պեղումների ժամանակ գտնված է հայոց Պակոր (Բակուր) II արքայի արձաթյա թասը, որի ղեղարվեստական նուրբ ձևավորումը արժանի է լուրջ ուշադրության: Թասը իր ներսում ունի հունարեն մակագրություն՝ «Պակոր թագավորից»:

Բ. Վ. Լուսինը, մանրամասն և բազմակողմանի ուսումնասիրելով այդ թասը, եզրակացնում է, որ դա մեր թվագրության II դարի հայ-պարթևական արվեստի արտադրություն է¹:

Միության ակադեմիայի թղթակից-անդամ Կ. Վ. Տրեվերը ևս հաստատեց, որ այդ թասը երկրորդ դարի հայ-պարթևական մշակույթի արտադրություն է և պատկանել է հայոց Պակոր II արքային²:

Այդ թասը հիմա գտնվում է Ռուստուփի Դավառոդիտական Պետական թանգարանում: Այն անշուշտ, Մայկոպի շրջանը բերվել է հայ գաղթականների կողմից: Դախուսկայա ստանիցան, ինչպես և մյուս հարևան ստանիցաներն ու Մայկոպ բաղարը հիմնված են XIX դարի երկրորդ կեսում, երբ այդ վայրերից հայերը արդեն հեռացել էին: Այդ տեղերում էին հայերի երեք գլխավոր աուլները: Հայ վաճառականության մեծ մասը ապրում էր այդտեղ տեմիրդոյիների ու Լգերուխայիների մեջ, թուրուկ իշխանների կալվածներում:

Այդ թասը այդտեղ բերողը անշուշտ եղել են հայ գաղթականները, որոնց ժառանգները դարեր շարունակ պահել են այն: Թասը գետնի տակ պահպանել է անշուշտ եղել է մեկը, որը պատերազմական պայմաններում հեռանալով այդտեղից, անհրաժեշտ է համարել թաղել այն:

Թե Բելոռեչենսկայա ստանիցայի եկեղեցու ավերակների տակից հայերեն արձանագրության մեջ բարձր, թե Աշոտ I-ի մատանի-կնիքը և թե Պակոր II թագավորի արձաթյա թասը հայտնաբերված են բոլորովին պատահաճաճ, անսպասելի կերպով, այլ նպատակներ հետապնդող պեղումների ժամանակ:

Չերքեզահայերի անցյալը ուսումնասիրելու նպատակով ոչ մի պեղում և առհասարակ որևէ հետազոտություն երբևէ չի կատարված: Ուշագրավն այն է, որ հայ նյութական մշակույթի այդ համր վկանները գտնված են Չերքեզիայում, Չերքեզահայերի նախկին բնակավայրերում, որտեղ նրանք դարեր շարունակ ապրել ու գործել են:

Ով է իմանում, պատմության համար զեղուս որքան այդպիսի մեծարժեք, անլիզու վկաններ են թաղնված այդ վայրերի ավերակների ու հողերի տակ:

Հայտնաբերված երեք իրերն էլ հաստատորեն ապացուցում են հայերի շատ վաղեմի գոյությունը Չերքեզների երկրում:

Չերքեզահայերի հետագա պատմական բախտը մասամբ մեզ հայտնի է, բայց մեր թվային դուրս է համառոտակի նշենք միայն նրա ելքը XVIII դարի 80-ական թվականներին հայ բնակչության թիվը Հյուսիսային Կովկասում ավելանում է: 1780 թ. Ղրիմի հայերը Գոնի աջ ափին հիմնեցին Նոր-Եսախիյան բաղարը և հինգ հայկական գյուղ նրա մերձակայքում: Նույն ժամանակներում Ազով-Մոզդուկ ուսգամական զծի վրա հիմնվում է Գեորգիևսկ բաղարը և 1782 թ.

¹ 5. В. Луни́н, Археологические находки 1935—36 гг. в окрестностях станиц Тульской и Лаховской, IV, Серебряная чаша с рельефными изображениями, ВДИ, 1939, № 3, էջ 220—223: Տե՛ս նաև Известия Ростовского областного музея за 1940 г., էջ 20:

² К. В. Тре́вер, Очерк по истории культуры древней Армении (II в. до н. э.— IV в. н. э.), М.—Л., 1953, էջ 242—243:

ռուսաց կովկասյան զորքերի հրամանատար Պավել Պոտյոմկինի հրավերով Նոր-Նախիջևանի տասնյակ հայ առևտրականներ հաստատվում են Գեորգիևսկում, ապա և Ստավրոպոլում:

Նախկին ղրիմաբնակ, ապա Նոր-Նախիջևանում, Գեորգիևսկում և Ստավրոպոլում հաստատված հայերը վերանորոգեցին իրենց առևտրական կապերը վաղեմի ծանոթ «հայ շերքեզներին» հետ: Այդ ժամանակներից մենք ունենք ճշգրիտ տեղեկություններ նրանց մասին:

Չերքեզահայերը յուրացրել էին շերքեզների լեզուն, սովորույթները, հագուստներն ու զենքերը, կենցաղը: Նրանք մոռացել էին իրենց պապերի լեզուն, թեև նրանց մեջ կային հայերեն աղոթք իմացողներ, բայց Նոր-Նախիջևանի հայերի հետ բացատրվում էին թարգմանիչների օգնությամբ: Նրանք, սակայն, պահպանել էին իրենց պապական դավանանքը, խմբովին բնակված վայրերում նաև համայնական ինքնավարությունը, բնական կան, ներքին կարգ ու կանոնը և որ կարևորն է իրենց սրտի խորքում գարեբով փայտայած հայրենասիրական զգացմունքները:

Շփվելով Նոր-Նախիջևանի, Գեորգիևսկի և Ստավրոպոլի նախկին ղրիմաբնակ հայերի հետ, շերքեզահայերը ցանկություն ցուցաբերեցին անցնել ռուսական հողը և բնակություն հաստատել Նոր-Նախիջևանի մոտերքը, սակայն այդ հարցը առաջանալով 1780-ական թվականներին, իր լուծումը չի ստանում մինչև 1839 թ.:

1836 թ. շերքեզահայերի տեղափոխության հարցը նորից է բարձրանում, մասնավորապես այդ ժամանակ համարյա բոլոր շերքեզահայերը արդեն ամբողջ համայնքներով դուրս էին եկել իրենց բնակավայրերից և թափառական կյանք էին վարում ռուսաց սահմաններում: Ի վերջո 1839 թ. շերքեզահայերը ի մի հավաքվեցին և գնեցին Զուսի թույլտվությամբ ու խորհրդով Կուրանի ափին հիմք դրին իրենց հռչակավոր Արմավիր առկին: Խաղաղ պայմաններում զբաղվելով երկրագործությամբ, անասնապահությամբ, առևտրով և արդյունաբերությամբ նրանք սովորական առև Արմավիրը դարձրին առևտրի և արդյունաբերության աչքի ընկնող կենտրոն Հյուսիսային Կովկասում:

ԵԶՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Չերքեզահայերը Կասոխայի կամ Կոսոխայի հայերի հետնորդներն են: Հայերը եկել են մայր հայրենիքից XI դարի առաջին կեսում, ընդհանուր հայ գաղթականության ժամանակ և կահգ առել շերքեզների երկրի ծովափնյա մասում, Թամանի թերակղզում:

X—XII դարերում բոլոր ազգից ցեղերի մեջ առաջին տեղն է բռնել Կասոխների կամ Կոսոխների ցեղը, որը կարողացել է իրեն ենթարկել և իրեն հետ ձուլել բոլոր մյուս ցեղերին, որի համար թե այդ ժողովուրդը, և թե նրա երկիրը կոչվում էր Կասոխ կամ Կոսոխ:

Հայերը եկել են շերքեզների երկիրը նրա կասոխական շրջանում:

Այդ է պատճառը, որ Կասոխում ապրող հայերին օտարներն սկսեցին անվանել Կոսոխացի կամ կասոխացի հայեր:

Հայերի Չերքեզիա մտնելու ճիշտ տարեթիվը մենք չենք կարող որոշել, բայց անկասկած այն եղել է 1062 թվականից բավական վաղ, որովհետև մինչև այդ թվականը Կոսոխացի հայերը վաստակել էին լավ կովորների համբավ, որը հասել էր Գալիցիա և դրա հիման վրա էր Գալիցիայի իշխան Թեոդոր Դմիտրիևիչը առանձին հրավիրագրով 1062 թ. դիմել Կասոխի հայերին և հրավիրել իր երկիրը: Հայերի մեծ մասը ապաստանեց լեռներում, ստացավ շերքեզահայ անունը, իսկ ծովամերձ վայրերում մնացած մասը խառնվեց Ղրիմի հայերի հետ և ի վերջո հիմնվեց Նոր-Նախիջևանում:

Շատ հետաքրքրական է և հետազոտության արժանի նաև լեռնաբնակ շերքեզահայերի 899 տարվա պատմությունը, որը մեր նպատակից դուրս է և կարիք ունի առանձին ուսումնասիրություն:

КОГДА И ОТКУДА АРМЯНЕ ПЕРЕСЕЛИЛИСЬ В ЧЕРКЕСИЮ

Х. А. ПОРКШЕЯН (Нальчик)

(Резюме)

В X—XII вв. среди адыгейских племен главенствовало племя касохов или косохов, которое смогло подчинить себе и ассимилировать все другие племена, вследствие чего как народность в целом, так и страна стали называться Касох или Косох.

Армяне пришли в страну черкесов в ее касохский период. По этой причине армян, живущих в Касохе, иноземцы стали называть касохскими армянами.

Черкесские армяне являются потомками касохских или косоховских армян, которые переселились из Армении во время массовой эмиграции в первой половине XI в. и осели в прибрежной части Черкесии, на Таманском полуострове.

Точную дату переселения армян в Черкесию мы определить не можем, однако, это, несомненно, имело место до 1062 года, так как до этого касохские армяне уже стяжали славу отважных воинов, славу, дошедшую до Галиции, вследствие чего галицийский князь Федор Дмитриевич в особом послании от 1062 года обратился к касохским армянам и пригласил их в свою страну. Большая часть армян приняла его приглашение и переселилась. Часть оставшихся касохских армян нашла пристанище в горах, получив название черкесских армян, другая же часть, оставшаяся в прибрежных местах, слилась с крымскими армянами, а впоследствии обосновалась в Новом Иахичеване.

Очень интересна и достойна особого изучения также 800-летняя история черкесских армян-горцев, что, однако, выходит за пределы нашей темы и нуждается в отдельном исследовании.